# ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ (*ՄՈՍԿՎԱ*),

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ԻՆ (*ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ*),

ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԴՈՍԻՈՍԻՆ (*ԴԱՄԱՍԿՈՍ*),

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ-ԻՆ (*ԹԲԻԼԻՍԻ*),

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՐԻԻՆ
(*ԼՈՆԴՈՆ*),

ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (*ԲՈՒԽԱՐԵՍՏ*),

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (*ՍՈՖԻԱ*),

ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԿԼԻՏՈՍԻՆ (*ԱԹԵՆՔ*),

ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (*ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ*),

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ
ՄԱՐ ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍԵ Բ-ԻՆ (*ՔԵՐԱԼԱ*),

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (*ՌԻԳԱ*),

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (*ՏԱԼԼԻՆ*),

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ
ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆԻՆ (*ՎԵՆԵՏԻԿ*),

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՀԱՅՐ
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (*ՎԻԵՆՆԱ*)։

Սիրեցյալ Եղբայր Մեր ի Քրիստոս.

Սուրբգրական Արարատի փեշերեն և Ս. Էջմիածնեն, հուսացյալ և ուրախ սրտով, կողջունենք զՁեզ մեր Տիրոջ և Փրկչի Ս. Ծննդյան ավետիսով, Մեր ջերմագին մաղթանքները բերելով Ձերդ Սրբության՝ վասն քաջառողջ և երջանիկ հովվապետության ու Ձեր լուսափայլ Ս. Եկեղեցին ու ժողովուրդին՝ վասն բարօրության և ծաղկման։

Թող Ս. Ծննդյան շնորհները առատապես իջնեն մեր աշխարհին վրա, հիրականացում երկնային մեծ ու փրկարար պատգամին՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։

Ձեզ միշտ սիրող ու հարգող՝

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ա-ԻՆ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր Մեր ի Տեր.

Հավատի նույնությամբ և սիրով ու համերաշխությամբ ողջունում եմ Ձերդ Սրբությանը Քրիստոսի Ս. Ծննդյան տոնի առթիվ, փառավորելով Ձեզ հետ միասին աշխարհի Փրկչի ծնունդը, միաժամանակ աղոթում եմ, որ Տերը նորոգի Ձեր կյանքը և ուժերը, առավելյալ հաջողությամբ շարունակելու համար Ձեր ջանքերը Տիրոջ փառքի և հոգիների փրկության համար։

Եղբայրական սիրով ի Քրիստոս մնամ միշտ Ձեզ անձնվեր՝

**Ա Լ Ե Ք Ս Ի**

Մ Ո Ս Կ Վ Ա — ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ

---

Սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս.

Խոր հրճվանքով է, որ Մենք ստացել ենք Ձերդ Սրբության ողջույնները ու Ծննդյան մաղթանքները Մեր Տիրոջ և Փրկչի Ս. Ծննդյան առթիվ։

Մեր սրտի խորքից փոխադարձելով Ձերդ Ամենապատվության ողջույնները ու եղբայրական բարեմաղթությունները, աղոթում ենք ամենակարող Աստուծուն, որպեսզի նորածին Հիսուսը պարգևի Ձեզ, Ձեր եղբայր Եկեղեցու հոգևորականության և համայն հավատացյալ հոտին՝ խաղաղություն և բարօրություն և առատ օրհնություններ։

Ամենաանկեղծ եղբայրական մաղթանքներով՝

**Ք Ր Ի Ս Տ Ա Փ Ո Ր Բ**

ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ

Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի Ա

---

Սիրեցյալ Եղբայր մեր ի Տեր.

Եղբայրական համբույրով ի Քրիստոս, ողջունում և շնորհավորում եմ Ծննդյան մեծ տոնը և Նոր տարին, և ամբողջ հոգվով ցանկանում Ձերդ Սրբության առողջություն և երկար տարիներ։

Թո՛ղ Տերը արժանացնի մեզ Ձեզ հետ ամեն տարի խաղաղությամբ ու սիրով դիմավորելու փառավոր այս տոնը և ապրելու ամբողջ աշխարհում, հրեշտակների խմբի Ծննդյան գիշերը ավետած իսկական քրիստոնեական խաղաղությամբ։

Ձերդ Սրբության եղբայր՝

**Թ Ե Ո Դ Ո Ս Ի Ո Ս**

Դ Ա Մ Ա Ս Կ Ո Ս — ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ

---

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս.

«Շնորհք ընդ Ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ, ի Հօրէ մերմէ և ի Փրկչէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ»։

Մեր Տիրոջ Ծննդյան տոնը տոնելով, նշում ենք պատմության մեջ ոչ թե մի դեպք, այլ այն, որ ժամանակը հավիտենականության է կապում. և գոհությամբ ենք հայտնում, որ Բանը, որ «ի սկզբանէ էր առ Աստուած, մարմին եղև և բնակեաց ի մեզ» (Յովհ. Ա 14)։ Մարդկային մարմին առնելով, մեր օրհնյալ Տերը չեկավ արքայական իշխանությամբ, այլ ամենայն հեզությամբ, որպես մսուրում ծնված Մանուկ, «զանձն ունայնացոյց՝ զկերպարան ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղև» (Փիլիպ. Բ 7)։

Այնուհանդերձ սա Նա է, որի մասին մարգարեն խոսեց որպես «Սքանչելի, Խորհրդակից, Աստուած հզօր, Հայր հանդերձելոյ աշխարհին և Իշխան խաղաղութեան» (Եսայի Թ 6):

Մինչ մենք միասին ուրախանում ենք այս տոնին հրեշտակների դասով և երգում ենք «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», Ձեզ եմ հղում, սիրեցյալ եղբայր, իմ ջերմագին շնորհավորությունները ու եղբայրական սերը, մաղթելով Ձեզ՝ մեր Փրկչի Ծննդից եկող այդ սուրբ ուրախությունը: Մինչ աշխարհում դեռ մեր շուրջը մթություն է տիրում, ուրախանանք, որ «Լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ և խաւար նմա ոչ եղև հասու» (Յովհ. Ա 5):

Աղոթենք, որ Աստուծո ողորմութեամբ մարդիկ համեստություն ունենան իրենց բոլոր գիտությունը ներարկելու Աստուծո սուրբ կամքին, որ մարդիկ դառնան Քրիստոսի արդարության, խաղաղության և սիրո թագավորության ծառաներ, որ չարի բոլոր ուժերը խափանվեն և ամբողջ մարդկությունը կարողանա տեսնել «զփառս Նորա, զփառս իբրև զՄիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ» (Յովհ. Ա 14):

Այս առթիվ սրտագին ուրախությամբ է, որ միացած ենք ոչ միայն Բեթղեհեմի հովիվներին, այլ նաև մեր բոլոր եղբայրների հետ՝ ի Քրիստոս Հիսուս պաշտելով Սուրբ Մանկան Իր օրհնյալ Մոր բազուկների մեջ և ընդունելով Նրա ներկայության օրհնությունը:

Սիրելի Եղբայր իմ, հաճեցեք ընդունել անկեղծ բարեմաղթությունները, աղոթելով, որ այս տոնի առթիվ Բեթղեհեմի Քրիստոս Մանուկը օրհնի Ձեզ, Ձեր հոգևորականությանը և Ձեր համայն հավատացյալ ժողովրդին:

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

ՋԵՈՖՐԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏՐԲԵՐԻԻ,

ԼՈՆԴՈՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

---

Ձերդ Սրբություն.

Մեծ և սքանչելի ամենագետ Տեր Աստվածը, որպեսզի մեզ Իրեն համար կենդանի արարածներ դարձնի, ուղարկեց Իր Միածին Որդուն, որի ծնունդը, որպես «մեծ խորհուրդ», տոնում ենք ուրախ սրտով: Ս. Եկեղեցին խանդավառ երգեցողությամբ տոնում է այս հրաշալի դեպքը երգելով. «Մնաւ Կոյսն»... «և Բանն մարմին եղև: Հովիւքն փառս տան ընդ հրեշտակս, և մեք ընդ նոսին գովերգեմք՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն»:

Ուրախ է Աստուծո Եկեղեցին: Հրճվում են և «Ուրախ եղեն հրեշտակք յերկինս, ուրախ եղեն և մարդիկ, զի ծնաւ Աստուած Փրկիչ ի Բեթղեհէմ»: Աստվածային ողորմության և խոնարհության այս տոնը մեր մեջ ցանկություն է առաջ բերում՝ արժանի լինելու աստվածահաճո մեծ և բարի գործերի, որոնք ուղարկվում են մեզ Աստուծուց, մեզ անեծքից փրկելու և դեպի հավիտենական կյանքը առաջնորդելու համար:

Թո՛ղ օրհնված լինի Տիրոջ օրը, երբ սուրբ առաքյալների մարգարեությունը կատարվում է «Հզօր Իշխանի» մասին (Եսայի Թ 6), որը մարդկությանը հաշտեցնում է Տիրոջ հետ և մարդկային բնությունը բժշկում մեղքից:

Քրիստոսի այս լուսապայծառ տոնի օրը բաց անենք մեր սրտերը խաղաղության երկնային հիմնի առաջ, որպեսզի խաղաղությունը թագավորի ամբողջ աշխարհում, զի Կույսից ծնվածը «մեր խաղաղությունն» է (Եփես. Բ 14):

Ձերդ Սրբություն, իմ և Ս. Սինոդի կողմից շնորհավորում եմ Քրիստոսի Ծննդյան լուսապայծառ տոնը: Ջերմորեն աղերսում են մանկացյալ Տեր Հիսուսին, որ պահպանի Ձեզ առողջ և Ձերդ Սրբության պարգևի երկար տարիներ, Ձեր բարեպաշտ հոտին և բարի կամքի տեր բոլոր ժողովուրդներին շնորհի խաղաղություն և հաջող ու բախտավոր Նոր տարի:

Ապավինելով Ձեր լուսապայծառ աղոթքներին, մնամ Ձերդ Սրբության խոնարհ եղբայր և լծակից՝

ԿԻՐԻԼ

ՍՈՖԻԱ

ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ

---

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.

Ծննդյան երկրից շատ հեռու՝ Հնդկաստանից, որտեղ մեր Տիրոջ սիրելի Ս. Թովմաս Առաքյալը քարոզեց Ավետարանը և մահացավ որպես մարտիրոս, Ձեր խոնարհ եղբայր Բասիլիոս կաթողիկոսը, Ձեր շնորհավորանքների համար մեծ հրճվանքով շնորհակալություն է հայտնում Ձերդ Սրբության և փոխադարձում է մեր Փրկչի Ծննդյան ավետիսը: Թո՛ղ առաջին այդ ծնունդի հրճվանքը և իմաստը բերեն խաղաղություն և Աստուծո օրհնությունները Ձերդ Սրբության Ծննդյան այս տոնին և թո՛ղ Նոր տարին լինի պայծառ և երջանիկ՝ Մանուկ Հիսուսի օրհնություններով:

«Ամեն Ծնունդի Քրիստոս նորից է ծնվում
Հավատացյալ սրտերի մեջ:
Թող այս հրճվանքը բերվի երկիր,
Մնա ձեզ հետ հավիտյան»:

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

**ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍԸ Բ**

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԵՎԵԼՔԻ

ՔԵՐԱԼԱ

---

Քրիստոսի ծննդյան նախօրյակին և Նոր տարվա շեմքին, գոհունակությամբ հիշում եմ մեր համատեղ աշխատանքը խաղաղության պաշտպանության կոմիտեում, ինչպես նաև Մոսկվայում, շվեդական հոգևորականության ներկայացուցիչների՝ Բալթիական ծովի ափերից լյութերականների հանդիպումները և ծանոթությունը Արարատի ստորոտում գտնվող հնադարյան Հայ եկեղեցու բարձր ներկայացուցիչների հետ:

Խնդրում եմ ընդունել սրտագին շնորհավորություններս և բարեմաղթություններս Ձեր եկեղեցու հավատացյալների, Ձեր աշխատանքների համար, հրեշտակային երգակցությամբ՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

**ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ**

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ–ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՌԻԳԱ

---

Ձերդ Սրբություն.

Քրիստոսի Ծննդյան նշանակալից տոնի առթիվ, ամբողջ սրտով ողջունում եմ Ձերդ Սրբության Ծննդյան երգով, որը երգում էր հրեշտակների խումբը Բեթղեհեմի վրա. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ողորմած Աստված թող պահպանի Ձերդ Սրբությանը Իր նախախնամությամբ: Թող օրհնի Նա Ձեր Ս. եկեղեցին:

Առաջիկա Նոր տարվա առթիվ թող Տերը առաքի մեզ Իր ողորմությունը և սերը, որպեսզի խաղաղության Աստվածը մշտապես մեզ հետ լինի:

Ձերդ անկեղծորեն՝

**ՅԱՆ ԿԻՅՎԻՏ**

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ–ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԱԼԼԻՆ

---

Երախտագիտությամբ վերհիշելով մեր հիշատակելի այցը Ձերդ Սրբության, Ս. Ծննդյան առթիվ առաքում ենք ջերմագին բարեմաղթություններ Ձեր եպիսկոպոսներին, հոգևորականության և հավատացյալներին:

**ԴՈԿՏ. ՎԻԼՅԱՄ ՎԻՍՍԵՐՏ ԴԸ ՀՈՒՖՏ**

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԺԸՆԵՎ